Հարգելի՛ գործընկեր,

Սիրով հրավիրում ենք Ձեզ սույն թվականի հոկտեմբերի 12-ին և 13- ին մասնակցելու Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվող «Թարգմանությունը XXI դարում» խորագիրը կրող միջազգային գիտաժողովին:

Թվային տեխնոլոգիաների դարաշրջանում զգալիորեն փոփոխվում է թարգմանչի մասնագիտության նկարագիրը, ի հայտ են գալիս նոր հնարավորություններ և խնդիրներ: Ուստի գիտաժողովն ունի կիրառական ուղղվածություն. այն միտված է նպաստելու գործող և ուսանող թարգմանիչների մասնագիտական զարգացմանը, օգնելու նրանց ներկայանալու և ինտեգրվելու միջազգային մասնագիտական հարթակներում: Բանախոսներն են միջազգային թարգմանչական գործակալությունների փորձագետներ, գրողներ և թարգմանիչներ ԱՄՆ-ից և Եվրոպայից, ինչպես նաև այդ ոլորտի հայ առաջատարները:

Գիտաժողովին համակցված ձևաչափով մասնակցելու ենք հրավիրում գործող թագմանիչների, ուսանողների և դասախոսների ՀՀ –ից, Արցախից և արտերկրից, համատեղ քննարկելու թարգմանչական գործի նրբություններն ու մարտահրավերները, խոսելու նոր ստեղծվող ուղղությունների, մոտեցումների մասին, ստանալու փորձի փոխանակման և գործարար կապերի հաստատման հնարավորություն: Լավագույն ելույթները կտպագրվեն առանձին հանդեսում:

Խնդրում ենք այս տեղեկությունն ուղարկել նաև համապատասխան ստորաբաժանումներին: Մասնակցության հայտերն ընդունվում են translation.conference21@gmail.com էլեկտրոնային հասցեով, մինչև սույն թվականի օգոստոսի 1-ը՝ հետևյալ ձևաչափով՝ https://bit.ly/412XIbU: